ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166-2

ք. Երևան « 12 » հոկտեմբերի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արկիտետտո Լուչիո Սպեկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լուչիո Սպեկայի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, ընդ որում 2020թ սկսվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 70-րդ օրացուցային օրը ներառյալ, բայց ոչ ուշ, քան ս.թ. դեկտեմբերի 20-ը, իսկ 2021 թվականին՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ տվյալ ծառայությունների մասով կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 200-րդ օրացուցային օրը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

ա) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ) ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 17500000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝

2020թ համար պայմանագրի գինը կազմում է 13125000 (տասներեք միլիոն հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ, որից 2187500 (երկու միլիոն հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2021թ համար պայմանագրի գինը կազմում է 4375000 (չորս միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, որից 729167 (յոթ հարյուր քսանինը հազար հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում ուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.1 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված 2021թ մատուցման ենթակա ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե 2020թ համար նախատեսված ծառայությունների մատուցման մասով պայմանագիրը ավարտվելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացվում են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումը՝ փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով:

Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011034932 ՀՎՀՀ 02698732	□Արկիտետտո Լուչիո Սպեկա□ ՍՊԸ Հասցեն՝ Իտիալիայի Հանրապետություն, Վիա Պոնտաչչո 14, 20121 Բանկ՝ Creval S.p.A. Հ/Հ՝ IT18P0521632380000000100016 ՀՎՀՀ 08473350968
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	**Տնօրեն՝**
---------- **Վ. Գասպարյան** (ստորագրություն) Կ.Տ.	---------- **Լ. Սպեկա** (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«12» հոկտեմբերի 2020 թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության										ՀՀ դրամ	
Հ/Հ	ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավոր	Ենթակա է գնման				Ընդամենը՝ 2020-2021 թթ	Մատուցման	
					2020 թ		2021 թ Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում			Ըստ օբյեկտի	
					ընդհանուր քանակը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	ընդհանուր գինը		հասցեն	ժամկետը*
			Գնման առարկա է հանդիսանում							Ըստ օբյեկտների	
2	71241200/7	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում-2	Նախատեսվում է իրականացնել ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակ համայնքի **ԱԳԱՐԱԿ վաղ բրոնզե դարի կացարանների**, միջնադարյան համալիրի և պարսպապատի ամրակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում, ծախսերի գնահատում ըստ Աղյուսակ N 1-ի (Վավերագրում և ուսումնասիրում կատարելու համար ներկայացվող պահանջներ) և Աղյուսակ N 2-ի (Նախագծի պատրաստում, ծախսերի գնահատում կատարելու համար ներկայացվող պահանջներ): Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝ ա) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող	դրամ	1	13125000	1	4375000	**17500000**	ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակ համայնքի	2020 թ՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 70-րդ օրացուցային օրը ներառյալ, բայց ոչ ավել քան **ս.թ. դեկտեմբերի 20-ը**, իսկ 2021 թվականին՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ տվյալ ծառայությունների մասով կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 200 - րդ օրացուցային օրը ներառյալ:

			նվազագույն պահանջները, գ) ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը, դ) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով: **Մշակված նախագծային փաստաթղթերը պարտադիր են լրամշակման՝ ըստ դրանց փորձաքննության եզրակացությունների**								

ԱՂՅՈՒՍԱԿ N 1՝ 2020 թվականին վավերագրում և ուսումնասիրում կատարելու համար ներկայացվող պահանջներ

Ծառայության կատարման պահանջներ

Նախատեսվող աշխատանքի անվանումը	Ծառայության համառոտ նկարագրությունը	Որակական	Համաձայնեցում	Այլ
1	2	3	4	5
Մատենագրական, արխիվային և գիտահետազոտական աղբյուրներից նյութերի հավաքագրում	Ծանոթանալ նախկին ուսումնասիրությունների նախագծային փաստաթղթերի հետ	Տեղագրական, պատմական, ճարտարապետական (խնդիրների լուսաբանմանը նպաստող), ուսումնասիրությունների և տեղեկությունների բացատրական նշումներ	Չի պահանջվում	Արդյունքները ներկայացնել էլեկտրոնային 1 և թղթային 2 տարբերակով
Վավերագրում	Համալիրի կառույցների և հուշարձանապատկան բեկորների ճարտարապետական չափագրություն, լուսանկարահանում, ծեփապանճենում, առկա քայքայումների, վնասվածքների և շերտագրության տեղադրում չափագրության վրա	Ընթեռնելի մասշտաբով, բոլոր չափերի և պայմանական նշանների տեղադրմամբ (գլխավոր հատակագիծ, կառույցների հատակագծեր, ճակատներ, կտրվածքներ, մանրամասեր)		
Տեղագրական հանույթ	Համալիրի, հուշարձանապատկան տարածքի և մոտեցման ճանապարհների տեղադրմամբ	Ըստ օրենսդրական և նորմատիվ պահանջների՝ հորիզոնական 0,25 մ նիշերով, Մ 1:200		
Հնագիտական հետախուզում և պեղում	կառույցների պարագծով մոտ 2 մետր լայնությամբ և միջոցառման տարածքների	ըստ օրենսդրական և նորմատիվ պահանջների՝ հաշվարկներ, վերլուծություն, եզրակացություն		

Էսքիզային նախագիծ	համալիր հետազոտությունների արդյունքների եզրակացություններ, դրանց հիման վրա ամրակայման հնարավոր տարբեր մեթոդների վերլուծությամբ՝ խնդիրների լուծումների գիտական հիմնավորումներ /այդ թվում՝ լուծումների տնտեսական արդյունավետության/	գծագրական մասը՝ ընթեռնելի մասշտաբով, հիմնական չափերի տեղադրմամբ, հիմնավորումների հստակ ներկայացում	համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)	ներկայացնել ալբոմ՝ 2 օրինակ, էլեկտրոնային կրիչ և ցուցադրական նյութ (պաստառ)
իրականացման աշխատանքների կազմակերպման հիմնադրույթներ	նախատեսել ծավալների իրականացման, կազմակերպման դրույթները և հերթականությունն ըստ ամիսների	ըստ նորմատիվ պահանջների		

ԱՂՅՈՒՍԱԿ 2՝2021 թվականին գիտանախագծայինևնախահաշվայինփաստաթղթերիմշակմանծառայություններիներկայացվողպահանջները

ճարտարապետականմաս /համաձայնհաստատվածէսքիզի/	Աշխատանքային գծագրերի մշակում, ճարտարապետական, կոնստրուկտորական, ինժեներական, գլխավոր հատակագիծ՝ուղղաձիգ հատակագծմամբ, աշխատանքների կազմակերպման նախագիծ	Ըստ նորմատիվ պահանջների՝գծագրական մասը ընթեռնելի մասշտաբով, չափերի տեղադրմամբ, բացատրագիր (յուրաքանչյուր միջամտության ձևի վերաբերյալ),	համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ(այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)	ներկայացնել ալբոմ՝ 4 օրինակ, էլեկտրոնային կրիչ՝ 1 օրինակ,թղթարկված, հայերենևռուսերենլեզուներով
Կոնստրուկտորականմաս/ըստ անհրաժեշտության՝ համաձայն հաստատված էսքիզի/				
Նախահաշվային մաս	ֆինանսական գնահատում ՀՀ դրամով	կազմելMicrosoft Excel ծրագրով, բանաձևերիկիրառմամբ, GHEAGrapal atտառատեսակովըստնորմատիվպահանջների		

Առդիր նյութեր և տվյալներ

Անվանումը	Էջերի քանակը	Ծանոթություն
Վկայագիր /паспорт/, պահպանական գոտի		ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ վարչություն
Ակտի ձևանմուշ		ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ վարչություն
Առաջադրանքի ձևանմուշ		ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ վարչություն
Արխիվային չափագրությունների տվյալներ	ցանկ	ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպաթության ծառայություն»

		ՊՈԱԿ -ում

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

L. Սպեկա
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 12 » 10 2020 թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Բ	ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ենթակա է վճարման 2020 թ. ՀՀ պետական բյուջեից՝ ընդ որում ըստ ամիսների**													2021թ*** Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում	Ընդհանուրը
			1-ին եռամսյակ			1-ին կիսամյակ			9 ամիս			տարի					
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր մինչև 30-ը	Ընդամենը		
2	71241200/7	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում-2										13125000	13125000	13125000	13125000	4375000	**17500000**

***Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն մասով ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

----------**Վ.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

----------**L. Սպեկա**
/ստորագրություն/
Կ.Տ

Creval

RICEVUTA BONIFICO

ORDINANTE		BENEFICIARIO	
Intestazione	SPECA LUCIO	**Intestazione**	Ministery of Republic of Armenia
Ordinante effettivo	SPECA LUCIO	**IBAN o Coordinate bancarie nazionali**	900008000664
IBAN	IT18P0521632380000000100016		
Divisa conto di addebito	EUR	**BIC**	CBRAAM22XXX
		Banca	CENTRAL BANK OF ARMENIA

DATI OPERAZIONE

Tipologia Operazione	Bonifico Estero
Divisa	EUR
Importo	3.087,56 EUR
Tipo spese	OUR
Spese e commissioni	9,00 EUR
Cambio applicato	1,00
Data valuta ordinante	08/10/2020
Descrizione	BONIFICO
Inserimento disposizione	08/10/2020 10:04:50
Stato	Eseguito

Creval S.p.A.
Sede centrale

Ricevuta generata in seguito a disposizione inserita su www.creval.it/bancaperta

CREVAL
Società per Azioni
Sede Legale e Direzione Generale:
Piazza Quadrivio, 8 - 23100 Sondrio
Capitale Sociale € 1.643.508.053,06 i.v.
Codice Fiscale e Partita IVA n. 00043260140

Telefono: 0342.522.111 - Fax: 0342.522.700
S.W.I.F.T.: BPCVIT2S
www.creval.it
www.facebook.com/Creval
Email: creval@creval.it
PEC: segreteriageneralecv@pec.creval.it

Registro Imprese di Sondrio n. 00043260140
Albo delle Banche n. 489 - Cod. ABI 5216
Capogruppo del "Gruppo bancario Credito Valtellinese"
iscritto all'Albo dei Gruppi bancari cod. n. 5216.7
Aderente al Fondo Interbancario di Tutela dei Depositi
e al Fondo Nazionale di Garanzia

Creval

RICEVUTA BONIFICO

ORDINANTE		BENEFICIARIO	
Intestazione	SPECA LUCIO	**Intestazione**	Ministery of Republic of Armenia
Ordinante effettivo	SPECA LUCIO	**IBAN o Coordinate bancarie nazionali**	900008000698
IBAN	IT18P0521632380000000100016		
Divisa conto di addebito	EUR	**BIC**	CBRAAM22XXX
		Banca	CENTRAL BANK OF ARMENIA

DATI OPERAZIONE

Tipologia Operazione	Bonifico Estero
Divisa	EUR
Importo	23.686,02 EUR
Tipo spese	OUR
Spese e commissioni	15,84 EUR
Cambio applicato	1,00
Data valuta ordinante	08/10/2020
Descrizione	BONIFICO
Inserimento disposizione	08/10/2020 10:00:50
Stato	Eseguito

Creval S.p.A.
Sede centrale

Ricevuta generata in seguito a disposizione inserita su www.creval.it/bancaperta

CREVAL
Società per Azioni
Sede Legale e Direzione Generale:
Piazza Quadrivio, 8 - 23100 Sondrio
Capitale Sociale € 1.643.508.053,06 i.v.
Codice Fiscale e Partita IVA n. 00043260140

Telefono: 0342.522.111 - Fax: 0342.522.700
S.W.I.F.T.: BPCVIT2S
www.creval.it
www.facebook.com/Creval
Email: creval@creval.it
PEC: segreteriageneralecv@pec.creval.it

Registro Imprese di Sondrio n. 00043260140
Albo delle Banche n. 489 - Cod. ABI 5216
Capogruppo del "Gruppo bancario Credito Valtellinese"
iscritto all'Albo dei Gruppi bancari cod. n. 5216.7
Aderente al Fondo Interbancario di Tutela dei Depositi
e al Fondo Nazionale di Garanzia

Հավելված 4.1
«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «12» 10 2020թ.**

«Արկիտեստտո Լուչիո Սպեկա» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն՝ Լուչիո Սպեկայի (անձ. տվ.՝ YA 2958173), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Արկիտետտո Լուչիո Սպեկա» ՍՊԸ

Իտիալիայի Հանրապետություն, Վիա Պոնտաչչո 14, 20121

Creval S.p.A.

IT18P0521632380000000100016

Տնօրեն՝

ORDINE DEGLI ARCHITETTI, PIANIFICATORI, PAESAGGISTI E CONSERVATORI DELLA PROVINCIA DI MILANO
SPECA LUCIO
architetto
12819

---------- **L. Սպեկա**

(ստորագրություն) L.S.

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Արկիտետտո Լուչիո Սպեկա» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Creval S.p.A.	
6. Վճարողի հաշվի համարը՝ IT18P0521632380000000100016	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 08473350968	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02698732**	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900008000664**	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **4475000 (չորս միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար)**	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ/AMD/**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/

ORDINE DEGL ARCHITETTI, PIANIFICATORI E CONSERVATORI DELLA PROVINCIA DI MILANO
SPECA LUCIO
architetto 12819

24.բ. Կ.Տ.	23.բ. Կ.Տ.
24.գ "___" ___ 20___ թ.	23.գ. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»*